## *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

## *ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-08 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2016թ-ի դեկտեմբերի 06-ին կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-08-56 պայմանագրում 2016թ-ի դեկտեմբերի 21-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա: Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարման համար նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի 4.2 կետը, Պայմանագրի N 2 և N 3 հավելվածները հաստատվել են նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 4.1.1, 9.2 և 9.4 կետեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**06.12.2016թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ**
**ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-08-56**
**ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «21» դեկտեմբերի 2016թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Խաչատրյանի, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 06.12.2016թ. կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-08-56 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1, 9.2 և 9.4 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 4.2 կետը հաստատել նոր խմբագրությամբ՝

<<4.2 Պայմանագրի գնի 100 տոկոսը՝ **83 849 400 (ութսուներեք միլիոն ութ հարյուր քառասունինը հազար չորս հարյուր)** ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար մինչև 30.12.2016թ.: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է Պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:>>

1.2 Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ և N 3 հավելված հանդիսացող ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի և հավելված N 2-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը և հավելված N 2-ը հանդիսանում են N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ*** | ***«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 | Հասցե՝ ք. Երևան, Շիրազի 36, բն. 14 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | Հ/Հ՝ 2050622032991001 |
| Հ/Հ՝ 900011192052 | ՀՎՀՀ՝ 01253291 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ |
| Ղեկավար՝ Կ. Փոլադյան | Տնօրեն՝ Վ. Խաչատրյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| | Կ.Տ |

Հավելված N 1
06.12.2016թ. կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-08-56 պայմանագրի
<<21 >> դեկտեմբերի 2016թ. կնքված N 1 համաձայնագրի

# ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1. | Սեղանի համակարգիչ | հավաքածու | 729 000 | 57 | 41 553 000 | 57 | 41 553 000 |
| 2. | Սեղանի համակարգիչ | հավաքածու | 538 800 | 48 | 25 862 400 | 48 | 25 862 400 |
| 3. | Համակարգչային սերվեր | հատ | 4 500 000 | 3 | 13 500 000 | 3 | 13 500 000 |
| 4. | Լազերային տպիչ | հատ | 97 800 | 30 | 2 934 000 | 30 | 2 934 000 |
| **Ընդամենը** | | | | X | | X | **83 849 400** |

**ԳՆՈՐԴ**
***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192052
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Ղեկավար՝ [illegible]յան
/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**
***«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Շիրազի 36, բն. 14
Հ/Հ՝ 2050622032991001
ՀՎՀՀ՝ 01253291
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրեն՝ [illegible]
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
06.12.2016թ. կնքված N ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-08-56 պայմանագրի
<<21>> դեկտեմբերի 2016թ. կնքված N 1 համաձայնագրի

# ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| N | Ապրանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ. | |
|---|---|---|---|
| | | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր | 83 849 400 | **83 849 400** |

**ԳՆՈՐԴ**
***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192052
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Ղեկավար՝ Ա. Փոլադյան
/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**
***«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Շիրազի 36, բն. 14
Հ/Հ՝ 2050622032991001
ՀՎՀՀ՝ 01253291
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Տնօրեն՝ Լ. Իսաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ